Դ ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901 — ԹԻՒ 36

ԲԱԺԱՆՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 տոլ.
Վեցամսեայ 1.50 »
ՏԱՆԻԼԻԿ ՎՃԱՐԵԼԻ
Տանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ. երեքին անգամի սանմանների համար 20 տող զոյգ կրկնայ։
Վաճառքի համար ձեռքի 10 ս

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԻ ՁՕՐԵՔ ԱՌԱՋԻ ՓԵՏ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

R. P. Kalémcarian, Mechitharistengasse W. 4
(Autriche) Vienne

«Шаржумъ»
Ваг...
Red... rnal
Va...
Գնուրիւն չի տրուիր
Առանձին համարներ
(20 ՄԱՆԹԻՄ)
Պուլկարիոյ համար ձեռքի
ՀԱՆԹԻՄ

ՇԱՐԺՈՒՄ — ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԵԱՆԻԼԻԿ ՎՃԱՐԷ

ՄԻՇՏ ԿՐ ԲԱՂՁԱՄ

(ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՈՒՂՂՈՒԱԾ)

Որչափ նժդեհ, օտար երկրի մէջ
անխնամ,
Անցնին օրերս, ուշանամ ու ան-
դարձ մնամ,
Այնչա՛փ ալ շատ կը տոչորիմ դառն
ու անհամ,
Բայց աչքերով հանիլ տեսնել գէ՛թ
մի՛ անգամ,
Զքեզ, մա՛յր իմ հարազատ,
Եւ հետդ ապրիլ յար ապատ։

Որչա՛փ ան՝ոք անտէր, աղքատ
և կամ հիւանդ,
Ըլլամ նոյն իսկ հարուստ մեծ մարդ
նա՛մանաւանդ.
Այնչափ դարձեալ բաղձամ ընչել և
մեռնիլ անդ
Քու սուրբ ծոցիդ, քու կոյս գոգիդ
մէջ արգաւանդ.
Զի հողն օտար չէ՛ արգար,
Հոն թաղուիլն ալ խիստ վատթար։

Որչա՛փ ձմրան ցուրտ ու սաստիկ
ձիւնոտ հովեր,
Փչեն սրտիս ազդեն վիշտեր յոյժ
կարեվեր,
Այնչափ կարծես այդ ցաւեր տան
ինձ հընաւէր՝
Իջնել կրկէս օգնելու քեզ, ո՛վ դու
իմ սէր.
Զի յոյս, կեանք ես իմ համար,
Ես քեզ երբէք չեմ մոռնար։

Որչա՛փ յոյզեր—հուր արցունք-
նե՛ր—այրած սրտի,
Կրծեն կուրծքս, կարճեն կեանքս
դեռ ծաղկաթի,
Այնչափ հոգիս հրդեհի յար ու
կարօտի
Քեզ միանալ, թողուլ զրկա՛նք հէգ
պանդխտի,
Ո՛հ այն ատեն երջանիկ,
Ըլլանք ես և Հայրենիք։

Որչա՛փ գազան, դաժան Սուլթանն
լիրբ աներես,
Հեռի պահէ, արգիլէ զիս Սուրբ
իղձերէս,
Այնչափ ալ եռ, քուն թէ արթուն
միշտ սըրտակէզ
Անդաճեմ կուռ, ժիր նկրտիմ գըտ-
նել զքեզ։

Պաշտել պատկերդ տրտմազգած,
Իբրեւ սրտիս վեհ Աստուած։

Որչա՛փ գեռ այս դժխեմ սեւ
բաղդն այն «կոյր բաշխող»,
Խարխլէ քեզ հարուածներով ծանր
ու ձախող,
Դուցէ քիչ մ'ալ պիտի հեծես, դո՛ւ
մայր ծնող
Սակայն մերձ է քեզ օր, արեւ,
փա՛ռք լուսաշող.
Կը հաւատամ.— անշուշտ այսման
դառնութիւն
պիտ՝ երկնի յիշատակ։
Ըսեմ.—Զմրեանս յաջորդն է.
Հայուն զարո՛ւնը ժպտուն։

Ս. Գոռայր

Ցօրշան 14 Հոկտ.

ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐԻ ԾՐԱՆԸ

Մի քանի ամիս առաջ եւրոպական մամուլը և քաղաքագէտները բոլորովին մոռացել էին հայկական հարցը և տանջվող հայ ժողովուրդը, ու յանկարծ ֆրանս-թրքական ընդհարումի պատճառով աւելի, հայկական հարցը կրկին դրվեց դիւանագէտների սեղանի վրա։ Ցուսահատութեան մէջ թաղված հայ ժողովուրդի առջև կրկին փայլեց յոյսի նշանները։ Հայկական հարցը դեռ մինչեւ օրս էլ եւրոպական մամուլի և քաղաքագէտների աչքերից չէ հեռացված և ծնդվում է։

* * *

Դաշնակցութեան և վերակազմ ելների միջև տարիներով բանակցութիւններ տեղի ունեցան միութիւնը յաջողցնելու համար. անկարելի եղաւ նոյն իսկ կանոնաւոր բանակցութեան սկսել, որովհետեւ Արփիարեանը շարունակ վարչութեան մէջ էր, ինչ որ պատճառ ատեանի խնդիրներ էր բարցրացնում և այսօր նոյն այդ Արփիարեանը անձամբ հրաժարվում է «անձնամոռացութեան օրինակը տալով կրտսերներուն». միթէ սա անակնկալ չէ։

* * *

Մի մեծամիտ, գործնական յեղափոխութեան վրա ոչ մի գաղափար չունեցող, թեթեւ, բայց եռանդոտ ու ենորոշ խառնված քով Պոլսական գրագէտ՝ Արշակ Զօրանեան Արամազդի պէս իշաւ ասպարէզ, և մի քանի տարի շարունակ յեղափոխականներին գրեթէ պարզ խենթ ոճրագործներ հռչակեց, մինչեւ իր յեղափոխութեան քննագատի գրիչը ձեռք առնելը եղած յեղափոխական գործերը անխորհուրդ, ջնջակար յայտարարեց, և այսօր, յանկարծ մի գառնուկի վերածված թէեւ կրկին. «խրոխտաբար» յայտարարում է. ես սխալեցայ և չեմ վարանիր խոստովանիլ»։ Մ՞իթէ սա էլ անակնկալ չէ։

Այո, սրանք բոլորը անակնկալներ են հայ ժողովուրդի սեր ոպիտակից որոշել անկարող տարրի համար։ Ու բարի, օգտակար անակնկալներ են, որովհետեւ գալիս են «պացուցանելու թէ՝ ազատութիւն սիրող ժողովուրդի մէջ յեղափոխութեան դաղափարը միշտ յաղթում է իր դէմ եղած խոչնդոտները, յաղթում է կամաց կամաց, բայց վերջնականապէս։

ՎԱՐԴՕ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—(II)—

1 Հոկտ. 1901

...Խմբագրութիւն

ՇԱՐԺՈՒՄ կիսաշաբաթաթերթի.

Կը խնդրեմ որ բարեհաճիք ձեր յառաջիկայ թիւին մէջ հրատարակել Պ. Արփիարի հետեւեալ նամակը։

Ընդունեցէք
յարգանաց հաւատիքը
ՄԽԻԹԱՐ (*)

Սիրելի բարեկամ,

Կիմանամ թէ տակաւին կը շարունակես ջանքերդ որ անցեալ տարի սկսեր էիր. ինքնաբերաբար մտնելով երկու կուսակցութեանց միջև, միութիւն յառաջ բերելու համար։ Առաջարկած պայմաններուդ դէմ ոչինչ այն ատեն ընդդիմութիւն տեսար, պատճառն այն է որ ներքին կարգապահական խնդիրներ պարտաւորեցին զիս պաշտօնիս վրայ մնալ մինչև Պաւոյ Ատեանի մը գումարումը։ Այդ պարտականութիւնս ինչպէս տեսանք, դժուարութեանց մատնեց միութեան առաջարկդ։

Անկից իվեր կացութիւնը փոխուած է։ Ահա ներկայ տարուան յունվար 15-էն իվեր է որ ինքնաբերաբար հրաժարած եմ Հնչ. կուսակ. վարչութեան անդամակցութենէն, ու մայիսէն իվեր ալ «Նոր Կեանքի» վարչութենէն ու դարձած եղած եմ պարզ զինուոր մը այն դասին՝ որուն տարիներէ իվեր կը նվիրենք մեր բոլոր սիրտը և ոյժը, և որուն միշտ հաւատարիմ պիտի մընամ, թ՝նչ ալ ըլլայ գիրքս։

Եթէ այս յայտարարութիւնս կըրնայ քեզ դիւրացնել քու ձեռնարկդ՝ սիրայօժար կը բաղձամ որ անիկայ գործածես հարկ դատած լաւագոյն եղանակովդ յօդուտ միութեան խորհրդոյ։ Ամենեւին փոյթս չեմ ըներ որ այս ընթացքս կրնայ պատրուակ հայթայթել չարախօսութեանը կարգ մը անձերու, որոնք ամէն երկրի ու ամէն ազգի մէջ գտնուած են, և որոնք չեն կրցած յուսահատեցնել երբեք հանրային բարիքին սրտանց կամեցողները։

Գիտես թէ «Արփիարի խնդիր» ըսուած վէճին մէջ ինէ աւելի նախանձախնդրութիւն դնողներ եղան որոնք ուրիշ տեսակէտ, ինձի նոյնիսկ հակառակորդներ էին։ Այս երեւոյթը կը բացատրուի անով որ իմ խնդիրս հանրային բարձրագոյն բարոյականի խնդիր մը եղած էր, նման Տրէյֆիւսի խնդրին։

Քու պայմաններուդ մէջ, սիրելի բարեկամ, հատ մը կար արդէն որ գոհացում կուտար այս չատ հասկնալի և արդար մտահոգութեան, եւ որ կը մնայ անշուշտ նորէն։

Ես հաւատի եմ անձնապէս — եւ կարծեմ որ բոլոր Հնչակեաններն ալ երբոր վերահասու ըլլան այդ պայմաններուն, նոյնը պիտի մտածեն,— թէ՝ ինկատ առնելով երկու կուսակ-

(*) Մխիթար կեղծանունն է այն անձնաւորութեան, որ «Դրօշակ»ի մէջ «Զէզոք» անունով ծանօթ է։
Ծ. Խ.

ցութիւններու կողմէ բղխած գժուարութիւնները, այդ պայմանները կը կազմեն միջին ճամբայ մը, ուր երկու կուսակցութիւնները կրնան մտնել, առանց որ իւրաքանչիւրին հաւաքական արժանապատուութիւնը եւ դիւրազգացութիւնը հարուած մը կրեն։

Նամակս չփակած, սիրելի բարեկամ, պարաք կզգամ իմ գնահատումի հարկս նուիրել միութեան համար ըրած բոլոր ջանքերուդ։ Մեր բոլոր ազգայիներէն յետոյ, ոչ մէկ մարդու դժուար ըլլալու է, մանաւանդ անոնց որոնք մեզի պէս քսանը հինգ տարիէ ի վեր կը հետամտին հանրային բարիքին, լռեցնել իր անձնական նկատումները եւ նոյնիսկ օրերը, և մենք հիներս պէտք է անձնամոռացութեան օրինակը տանք մեր կրտսերներուն։

Ա. ԱՐՓԻԱՐ

Լոնտոն 30 սեպտ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Սիլիստրէ 17 հոկտեմբեր

Սիրաւունքի վերջին 75 թիւին մէջ քաղաքէս գրուած թղթակցութիւն մը կարդացի, որքիչ ցաւ չպատճառեց գոնէ ինծի։

Թղթակիցը կըսէ թէ իրեն անծանօթ պատճառներով դպրոցական գործերը մինչեւ հիմայ կարգադրուած չեն. շիտա՞կ է ասիկա. իրաւ է որ մինչեւ հիմայ դասատու չունինք տակաւին և յայտնի ալ չէ թէ պիտի ունենա՞նք և ե՞րբ, որուն պաղտնիքը կարծեմ թղթակիցը պէտք է գիտնայ և գիտէ ալ, ալ ինչո՞ւ ստել այն ալ հրապարակաւ։

Եւ որպէս թէ մինչեւ հիմայ դասատու մը չի գտնուելուն համար ալ դպրոցի գործերը կարգադրուած չեն եղեր և մեր թաղականը բաւական հաւնուելիք տնօրինութիւն մը ըրած է, այսինքն երեք հոգիէ բաղկացեալ օգնական հոգաբարձուներ ընտրեր է, ընտրեր է եղեր անոնց տալով բացարձակ լիազօրութիւն դպրոցի անդոհացուցիչ վիճակը բարեշրջելու համար։

Աղջկանց դպրոց մը ունինք, եւ որ ունի իրեն արժանաւոր օրվարժուհին, որ ժամանակին սկսած է իւր դասեր. արական դպրոցն ալ ունի արդէն երկու պատրաստ պաշտօնեայ, հայ մը՝ կառավարիչ, երաժիշտ—օգնական դասատու, և պուլկար մը պուլկարերէնի համար, դպրոցն ալ սեպտ. 10էն բաց է և երաժիշտ օգնական դասատուն ինչպէս անցեալ տարի և այս տարի ալ կը շարունակէ իրեն վերաբերեալ դասերը. պուլկարերէնի դասատուն ալ քանի մը օր առաջ բացաւ իր դասերը. անդին կը մնան մէկ քանի աշակերտներ միանակ գալիք դասատուին վերաբերեալ. այս պարագայից մէջ ինչ ան գոհացուցիչ վիճակ ունին այլեւս կրկին դպրոցները. կարծեմ թէ գլխաւոր դասատու ալ բռնել կուզէր կանուխէն ժողովրդէն ընտրուած և կառավարութենէն վաւերացուած բուն հոգաբարձութիւնը, սակայն թաղական աղաները դէմ կեցան անձնական հաշիւներով և հոգաբարձութիւնը տեղի չի տալու համար ժողովրդեան իրարանցումի լռեց։ Ըսածս հաստատելու համար կարծեմ բաւական ապացոյց մը է, որ թաղականը իւր կական դպրոցին մէջ ալ խոթելու համար իրեն հետ առնելով ուրիշ մէկ քանի մարդիկ եւս՝ երեք հոգի ընտրեց օգնական-լիազօր հոգաբարձու, որ պարզ նախատինք մը է և անարգանք մը բուն հոգաբարձուներուն ուղղուած։

Ինչո՞ւ, եթէ հիները անկարող են թող հրաժարին. չէ՝ եթէ կարող են ան, ի՞նչու անոնց օգնական ալ տալ և այս ի՞նչ օրէնքով։ Պուլկարիոյ մէջ ենք և որչափ գիտեմ մեր դպրոցական հոգաբարձուները կընտրուին ժողովրդէն և կը վաւերացուին կառավարութենէն ու այսպէս ալ եղած է տարիներէ ի վեր, ալ ինչո՞ւ ելնել օրէնքի հակառակ գործել։

Աւելի ծիծաղելին որպէս թէ, օգնական ընդունուեր են ու կըսէ թէ բացարձակ լիազօրութիւն տրուած է իրենց կարողութեան սահմանին և գիտակցութեան զօրածին չափով գործել։ Արդ թող ներուի հարցնել թէ եթէ օգնական ե՞ն, ինչ կը նշանակէ բացարձակ լիազօրութիւն, և եթէ լիազօր ե՞ն. ինչ կը նշանակէ օգնական, ու այս է եղեր մեր թաղականին բաւական հաւնուելիք տնօրէնութիւնը, շիտակը ես չի հաւնեցայ, որովհետեւ օրէնքէ դուրս է և հոգաբարձութեան դէմ պարզ լարուած ք մը։

Թղթակիցը՝ որ այդ երեք հոգիներէն մէկը կը կարծուի արդեօք իրեն կարողութեան սահմանին և գիտակցութեան զօրածին չափո՞վ է որ այդ տողերը գրած է թէ իրեն խելքին փչածին չափով։

Աւելի կը յուզուի մարդ, երբ «պիւտճէի» վերաբերեալ մասը կը կարդայ. կըսէ թէ հաւասարակշռեալ պիւտճէ մը ունինք և պաշտօնեայք ժամանակին կրնան ապահովաբար ստանալ իրենց վարձք—բաւական է որ ըլլան անոնք պարտաճանաչ ու իրենց փափուկ պաշտօնին գիտակից...

Ո՞ր ատենէն հաւասարակշռուած է այդ պիւտճէն. եթէ հինէն է, երկու տարի առաջ պաշտօնավարող խեղճ վարժուհի մը երկու երեք օրէն ի վեր տեղս կը դեգերի տակաւին 80 ֆրանք գանձելիք դրամը առնելու համար անցեալ տարի տնօրէն դասատուն և վարժուհին (այրուկին) երկար բարակ ասոր անոր վազվռտելէ վերջ իրենց 400 ֆրանքէ աւելի պահանջքը մօտիկ 200 ֆր. կոտրելով հազիւ կրցան գանձել և մեկնիլ։ Գալով նոր շրջանիս, որչափ գիտեմ վարժուհին ստացած է սեպտեմբերի ամսականը ամսոյս 15ին և երաժիշտ դասատուն՝ որ ընտանիքէ հայր մըն է, ունի հինգ զաւակ, բոլոր խղճով կաշխատի իրեն եկեղեցական և դպրոցական պաշտօններուն մէջ շաբաթ մը հոգաբարձուի գանձապետին և մեր թաղականին ազա ատենապետին քով երթալ գալով ամսոյս 12ին կը ստանայ իրեն ամսականը, այն ալ 50 ֆրանք մինակ, այս 50 ֆր. որ իրօք ժամանակին պէտք է վճարուի։

Ցաւալի է, որ գոնէ հրապարակի վրայ այս ատենն չտէին մեր գրողներ. սակայն իրաւունք ալ ունին, որովհետեւ խաբելու և հրապուրելու համար ուրիշ միջոց չը կար այդպէս անուշիկ անուշիկ պէտք էր գրել մեր հեռաւոր ազգայինները խաբելու համար։

Պիտի կրնա՞նք խաբել մէկզմէկ ալ. ես իբրեւ Սիլիսդրէցի շատ լաւ գիտեմ և կրնամ ըսել որ մեր պիւտճէն արդարեւ կրնանք հաւասարակշռել ու ժամանակին վճարել պաշտօնէից մանաւանդ քանի որ 70—80 ֆրանքէ աւելի ամսականաւոր պաշտօնեայ չունինք ու չենք ուզեր ունենալ, սակայն ո՞վ պիտի ընէ այդ բարեկարգութիւնը, այդ բարեշրջումը, որ ամենէն փափաքելի է։

Հայրենիքում ես ապրում էի առանց ոչ և է նպատակի. Սախալինի մէջ ապրում էի ազատութիւնս վերստին ձեռք բերելու նպատակով։ Այսօր ես վերստին երջանիկ եմ, որովհետեւ իմ կեանքի համար երկու նպատակ կայ. մէկը երջանկացնել Նրան, ով ինձ սիրում է, երկրորդ գնալ կուռելու Նրանց համար որոնք ընդունակ չեն իրենց անասնական կեանքը փոխելու։

Բայց ես կասկածում եմ որ դու կարողանաս երկու ձգտումներիդ էլ հաւասար չափով բաւականութիւն տալ։

Դրանցից մէկն ու մէկը անպատճառ պէտք է յաղթող հանդիսանայ։

— Թերեւս, սակայն ես կաշխատեմ երկուսն էլ իրականացնել. բայց եթէ դրանցից մէկն ու մէկը չը կարողացայ իրականացնել այդ տեղ էլ մի անբնական բան չըկայ։ Կանեմ այն, ինչ որ կարող եմ երկուսին, միասին կը ծառայեմ այնքան ժամանակ, որչափ կը կարողանամ։

— Իսկ եթէ այնպէս պատահեց որ սէրը յաղթելուց յետոյ, ինքն էլ կարճ տեւեց, քեզ բոլորովին ջախջախեց, եւ այնուհետեւ դու մի հիասթափված մարդ դարձար։

— Ես հիասթափում ասված բանը անկարելի եմ ընդունում ինձ համար։

Իսկ եթէ այդ էլ կը պատահի, ես էլ բազմաթիւ հիասթափվածներից մէկը կը լինիմ. դրանով հասարակական կեանքը ոչ մի վնաս չի կրի։ Իմ տեղը մի ուրիշը կը գրաւի հասարակական կեանքի մէջ, ինձնից աւելի տոկունը, ինչպէս պատերազմի դաշտում ընկած զինուորի տեղը իսկոյն գրաւում է կենդանի մնացածը։

Վերջացնենք փիլիսոփայութիւնը։ Ես վաղը դիշեր ճամբա եմ ընկնում հայրենիք. նշանածս, սիրուհիս ինձ սպասում է։

Դու աշխատիր այստեղ գործը վերջացնել. ամուսնանալուց յետոյ, ես իսկոյն անցնելու եմ Պարսկաստան և այնտեղից սկսելու եմ գործունէութիւնը։

Յետոյ, ես հայրենիքում այնպէս մի մարդ չունիմ, որ՝ կարողանում վստահել և նրա տունը մնալ, անշուշտ դու այնտեղ այդպիսի մի վստահելի ընկեր կունենաս։ Ինձ Նամակով յանձնարարիր նրան։

— Շատ լաւ, յանձնարարական կը գրեմ. բայց դու աշխատիր որ ոստիկանութեան ձեռքը չընկնես. փոքր քաղաք է. Տփղիսին չի նմանում իսկոյն կարող են իմանալ։ Կը ձերբակալեն ու երազներդ օդը կը ցնդեն։

— Բերանդ խէրով բաց. յաջողութիւն. ես մի քանի բաներ ունեմ պատրաստելու. վաղը կը դամ յանձնարարական նամակը վերցնելու։ Առայժմ ցրտեսութիւն։

Այս ասելով Վահէն դուրս եկաւ։ Իսկ ես մնացի մինակ ու սկսեցի մտածել Վահէի մասին։

Ճշմարիտ անհասկանալի, անցեալում անհասկանալի տղա, պատանի, այսօր անհասկանալի այր մարդ։ Երէկ անհամբերութեամբ գործի էր գնում, այսօր սիրուհու ետեւից։

Ինչ տարօրինակ զգացմունք է սէրը, նա տիրապետում է և գազանման մարդին և հրեշտակի նմանին։ Սիրոյ առջեւ ընկճվում է թէ վայրենին, և թէ քաղաքակրթված մարդը։ Եւ որոշել թէ որը աւելի կարող է դիմադրել սիրոյ յարձակմանը, անկարելի է։

(Շարունակելի)

լին է և ուրկէ կախում ունի ամէն բարեփոխութիւն ու յառաջդիմութիւն։

Ըստ իս՝

Նախ ունենալու ենք իրեն պաշտօնին գիտակից թաղական մը, որ իրեն սահմանէն դուրս չելլէ. արդի թաղականը բնաւ յարմարութիւն չունի սկսեալ իրեն ատենապետէն, որ թրքախօս մըն է. հայերէն բնաւ չը հասկնար, եկեղեցւոյ մէջ կէսը հայհոյանք ալ կարդացուի ամէն կըսէ։

Երկրորդ՝ թէ որ հոգաբարձութիւնը կարող չէ, նորը ընտրելու ենք և աս ալ պէտք է իրեն սահմանին մէջ գործ է որ գործերն ալ կարգով կանոնով յառաջ երթան, չէ թէ այս աղան ասանկ կուզէ, այն աղան անանկ կուզէ ըսելով երթանք. Երբէք չըսպասենք ուրիշ վիճակ և պարապ տեղը չը խաբենք այս ու այն վարժուհին ու վարժապետը սուտ ու մուտ յայտարարութիւններով, թէ չէ ամո՛թ մեզ և մեզը մեր զաւակաց։

ՍԻԼԻՍԴՐԵՑԻ ՄԸ

Սուլինա 15 Հոկտ.

Ժամանակէ մը ի վեր տեղւոյս ազգային և եկեղեցական խնդիրներ երեսի վրայ մնացած էին և ազգայնոցս մէջ յուզմունք վերին ծայր սաստկացած էր։ Այսուամենայնիւ բոլոր ազգային զգայմունք ունեցողք սկսան լսելիօրէն խորհիլ թէ ի՞նչ է մեր բռնած ընթացք, վերջապէս հասկցան թէ՝ մենք պարտաւոր ենք զիրար սիրել, իրար յարգել, իրարու քով գալ, և ինչ որ մեր բազմատանջ հայրենիքի սրբազան պահանջք «սէր և միութիւնը» մեր մէջ կայացնել։

Ինչպէս որ նախորդ յօդուածովս խոստացեր էի թէ՝ կըսպասեմք օրինաւոր լուծման մը որպէսզի գովեստով յայտարարենք և այս օրս վստահ ենք որ այդպէս իւր օրինաւորութիւն ստացած է և թէ գովելու ալ արժանի է։

Ամսոյս 4ին տեղս այցելեց Վառնայի Արժ. Տէր Սարգիս քահանայ Ղարիպեան, իր առաջին գործն եղաւ 7 հոկտ. կիրակի օր Սուրբ պատարագ մատուցանել և երիտասարդութեան հոգմէ իրեն յայտնուած բաղձանքին համաձայն փառաւոր կերպով հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ընդ. Հայ. Յեղ. նահատակաց համար, որ արդէն վաղուց այդ փափաք ունեցած էր տեղւոյս երիտասարդութիւնը Հ. Յ. Դաշնակցութեան տասանամեակին առթիւ, բայց չէին կատարած այդ բաղձանք, արդեօք ի՞նչու։

Նորեկ տէր հայր երբ տեղեկացաւ այդ փափաք, անմիջապէս կատարեց և մենք կուգամք հրապարակաւ մեր խորին շնորհակալութիւնը յայտնել Արժ. Տ. հօր։

Զը մոռնամ ըսել նաեւ այդ օրուան փառաւոր քարոզը, որ արտասանեց, նիւթն ունենալով ազգն և եկեղեցին, դպրոցն և մանուկներ որ ապագային ղեկավարներ ըլլալու են։ Ներկայ էր հոծ բազմութիւն մը, եկեղեցւոյն աւարտումէն յետոյ խաչսհանգիստ եւ կատարուեցաւ և ժողովուրդ խորին տպաւորութեամբ և գոհ սրտով մեկնեցաւ։

Փոդովուրդ տեսնելով Արժ. Տէր Սարգիս հօր ջանքեր յուսաց որ եկեղեցական առ կախ մնացած խնդիրները անոր միջնորդութեամբ վերջնական լուծում մը կրնայ ստանալ, խնդրեց որ 15 օրի չափ տեսս մնայ այս գրգռութիւններին վերջ տրուի. տէր հայր տեսնելով ժողովուրդի համակրութիւնը չը մերժեց այդ առաջարկը։

Ամսոյս 11ին հինգշաբթի երեկոյ ժամը 9ին սրճարանի մը մէջ ընար. ժողով գումարուեցաւ. ազգայնոցս բաղձանքին համաձայն և տեղւոյս քահանայի հաւանութեամբ տէր Սարգիս հայր նախագահեց ժողովին։ Իւր օրինաւոր ատենախօսութիւն ներկայեց թաղ. խորհրդոյ ընտրութեանը օրինաւոր կանոնաւորման կարգապահութեան և առաջդիմութեան. լուրջ համակրութեամբ ժողովը փակուեցաւ։

Միւս օրը պատրաստուեցաւ ընտրութեան ցանկ մը և խաղութիւներ ու սրճարաններ ցրուեցաւ քուէարկութեան համար. Երեկ, 14 հոկտ. կիրակի Ս. պատարագին թէ և ինք չէր պատարագիչ, բայց նորէն հաճեցաւ կրկին անգամ իւր պարտքը կատարել աւելի լիովին կերպով։ Վերջին անգամուն քարոզը տեւեց 1 ժամ այլ և այլ նիւթոց վրայ, բոլորն ալ օգտակար և ուշադրութեան արժանի էին։ Նոյնպէս խուռն բազմութիւն մը ներկայ էր։

Իսկ կէս օրէն յետոյ ժամ 3 ու կէսին խառն ժողով գումարուեցաւ իր նախագահութեամբ ընտրութիւն կատարուեցաւ շատ յաջող կերպիւ, ժողով փակուեցաւ ժամը 5ու կէսին։ Ուրախ սրտով մեկնեցանք եկեղեցիէն. նոր ընտիր թաղականութեան գործը պիտի ըլլայ առաջին բայի եկեղեցւոյ պայծառութենէն, փոդոցի մէջ մնացած կամ օտար դըպրոց յաճախող փոքրիկ մանուկներ հաւաքել իրենց մայրենի լեզուով դաստիարակելու։ Վստահ ենք որ երիտասարդութիւնն ալ իւր ջանքեր չը պիտի խնայէ այդպիսի նուիրական պարտակատարութեան համար։

Մաղթենք յաջողութիւն և յաջատեւութիւն նոր—ընտիր թաղ. խորհրդոյ։

ՀԱՄԱՋԱՍՊ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ցանուն աշխարհի ամենէն նուիրական զգացումներուն, իսէր մանաւանդ երիտասարդութեան ու պատուիս զոր տարիներէ իվեր բազմակնճիռ կռիւներու շաղապատումին մէջ, ամենէն կատաղի հակառակորդներուս դէմ յաջողած եմ անպարտ պահել ցարդ, կը խնդրեմ որ բարեհաճիք անայլայլ տպագրել ներկայ երկտողս ձեր այն խմբագրականին ի պատասխան, որով աշխարհի ամենէն զազրելի մակդիրը տըրուած կը կարծէիք ինձի և բարոյական սարսափելի պատժի մը կը ենթարկուէիս զիս զարհուրելի լքումին հրաւիրելով բոլոր բարեկամներս։

Որքան որ անաչառութիւնը պարտք կը դնէ ձեր վրայ ամէն աւելի իսիստ ելլալ մանաւանդ մօտ բարեկամներու հանդէպ, միանգամայն հարկ կըլլայ որ անձ մը անուանարկելէ առաջ ստուգէք իրողութեան ճշգրիտ մանրամասնութիւնները, որով հետեւ իրողութիւնները միշտ բերնէ բերան դիւային անհեթեթութիւն մը կստանան, յաճախ, ափսոս այդպէս դանուանարկուին շատ մը անմեղ զոհեր։

Ձեզի հաղորդուածներուն մէջ իրողութիւնը այն է որ Տ. Վահան Շահրիման տաճկերէն լեզուով նամակ մը խմբագրած է Ֆիլիպէի թուրք հիւպատոսին ուղեալ «Բայց այդ նամակը փոստը չէ ձգուած, հետեւաբար սև է հետեւանք մը չէ ունեցած»։

Ես այդ իրողութիւնը իսկ պատմած եմ իմ մէկ բարեկամիս ճիշդ ինչպէս որ պատահած էր։

Անկէց ի վեր երկու տարի անցած է, և բարեկամս չեմ կարծեր որ դիտմամբ յեղաշրջելով պատմած ըլլայ իրողութիւնը։ Ամէն պարագայի մէջ իրեն կը մնայ հրապարակաւ յայտնել թէ ինչպէս պատմած է իմ ըսածներս։

Իսկ տէր խմբագիր, ձեր վրայ պարտք կը ծանրանայ այս կարեւոր կէտերը ստուգելէ ետքը, նոյնութեամբ ետ առնել ձեր խմբագրականին այն բոլոր խորհրդածութիւնները որոնք կրնան ինձի վերաբերիլ։

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Վառնա 20 հոկտ.

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՄ

Ի նպաստ երկսեռ որբախնամ ընկերութեան Հայոց Վառնայի

—()o()—

Պատիւ ունինք յայտարարելու թէ. հայ դորատանական ՎԷՊԷԼՈ խումբը ըստ իր խոստման բոլորովին անձնուիրաբար ի նպաստ ընկերութեանս յառաջիկայ հինգշաբթի հոկտ. 25ին պիտի ներկայացնէ խնամքով պատրաստուած «Երկու Ցիսնապետներ» բարոյալից թատերախաղը՝ խիստ ծիծաղաշարժ երկու վարագոյր զաւեշտով մը։ Եւ զբօսարանապետ Տ. Տիգրան Թիւֆէնքճեան նոյն գիշեր թատերասրահը ձրիաբար որբախնամիս տրամադրեի ըրած է։ Ուստի Գործ. ժողովս կուգայ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնելու պատ. ՎԷՊԷԼՈ խումբին և Տ. Թիւֆէնքճեանին։

Վստահ ենք և լիայոյս Տ. պատ. ազգայինք երբ Գործ. ժողովս իրենց ներկայացնէ ներկայացման դիւրամատչելի տոմսակները ամենայն սիրով և յօժարութեամբ պիտի մասնակցին սոյն նուիրական և բարձր ձեռնարկին անգամ մը ևս ցոյց տալով իրենց պարտաճանաչութիւն. և գիտնալով որ, ներկայացման հասոյթը պիտի յատկացուի ընկերութեանս անունով Հայաստանի հայ որբանոցնաց մէջ խնամուելիք որբերու ուսման կրթութեան և արհեստագիտութեան և թերեւս նոր որբերու որդեգրման, այն նօթի և թշուառ որբերուն՝ ուրնք ապագայ սերունդ և հայութիւն պիտի կազմեն։

Մնամք յարգանօք

Ի դիմաց Գործ ժողով

(ԿՆԻՓ)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՅԱՒԵԼՈՒԱԾ ԴՐՕՇԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՇԱԲԱԹ

Հարկ ենք համարում «Յաւելուածով» հաղորդել հասարակութեան վերջին շաբաթուայ ուշադրութեան արժանի հետեւեալ քաղաքական նորութիւնները։

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՕՅԻ ԴԻՄՈՒՄԸ

Հոկտեմբերի 3ին Բէրնի «Խաղաղութեան Միջազգային Բիւրօն» ուղարկել է Գերմանիայի, Աւստրիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի և

Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրներին հետեւեալ դիմումը որ, իբր պաշտօնական վաւերագիր, առաջ ենք բերում ամբողջութեամբ։

Պարոն մինիստր,

Խաղաղութեան Համաշխարհային X կոնգրէսը, գումարուած Գլասկովում այս տարուայ սեպտեմբերին, յանձնարարեց մեր Բիւրոյին դիմումն անել Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին, որպէսզի կայացուի պաշտօնական կոնֆէրանս հայկական հարցը վճռելու համար», իրագործելով 1895ի բէֆորմների ծրագիրը, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կիրառութիւն Բերլինի դաշնագրի 61րդ յօդուածի։

Աւելի քան քսան տարի է արդէն ինչ թիւրքաց կառավարութիւնը յանձն է առել հանդիսաւոր կերպով եւրոպական մեծ ֆետութիւնների առաջ՝ անյապաղ իրագործել այն բարելաւումներն ու բարենորոգումները, որ պահանջում են տեղական կարիքները հայաբնակ գաւառներում, երաշխաւորել նրանց ապահովութիւնը և պարբերաբար զեկուցանել այս նպատակի համար ձեռնարկված միջոցները պետութիւններին, որոնք պիտի հսկեն նրանց գործադրութեան վրայ։ Դա անշուշտ միջազգային բնաւորութիւն ունեցող մի խնդիր էր։ Արդ՝ այն ոգբալի վիճակը, որը անհրաժեշտ է կացուցել եւրոպական միջամտութիւնը յօդուտ հայերի, աւելի ևս վատթարացել է այն ժամանակից ի վեր։

Հէնց այդ պատճառով էր, որ անգլիական, ֆրանսիական և ռուսական կառավարութիւնները մշակեցին 1895ի մայիսին «Մեմորանդում» կոչուած վերոյիշեալ ծրագիրը, որը սահմանուած է երաշխաւորելու չարաչար տանջուող հայ ազգաբնակութեան կեանքի ապահովութեան իրաւունքը։

Դժբաղդաբար, այս ծրագիրը, որ կազմուած էր Սուլթանի կոտորածների տպաւորութեան տակ և Սուլթանի հաւանութիւնն էր գրաւած, չէ իրագործուել. նա մնացել է մեռած տառ, ինչպէս և Բերլինի դաշնագրի հանդիսաւոր երաշխաւորութիւնը։ Կոտորածները շարունակուեցին ընդհատումներով Բիթլիսի նահանգում, օրինակ, անցեալ տարի, Մուշում և Սասունում—վերջերս։ Անհնարին է թւում, պարոն Մինիստր, որ հայերի ապահովութիւնը երաշխաւորող պետութիւնները, այլ ևս անգործօն մնան։

Բէրլինի դաշնագրող պետութիւնները, ընդունելով մեր դիմումը իրերի սպառնալից վիճակի դէմ լրջօրէն հակազդելու նպատակով, կրկնակի ծառայութիւն մատուցած կը լինէին մարդասիրութեան գործին, քանի որ նրանք վերջ կը դնեն մի նահատակ ժողովրդի չափազանց երկարատև տառապանքներին, և միւս կողմից՝ խոստացած բէֆորմների իրագործումով՝ նրանք կը ջնջեն գլխաւոր պատճառներից մէկը այն փոթորիկների, որոնք կան մշտապէս թագնուած դրութեան մէջ աշխարհի այդ մասում։

Հաճեցէք ընդունել, պարոն մինիստր, մեր վստահութեան արտայայտումը դէպի ձեր վեհանձն զգացմունքները և մեր խորին ու պատկառոտ յարգանաց հաւաստիքը։

Ի դիմաց խաղաղութեան Միջազգային Նայուն Բիւրոյի՝
Նախագահ ՖՐԷԴԵՐԻԿ ԲԱՅԵՌ
Պատուոյ քարտուղար ԷԼԻ ԴՐԿՕՄՄԵՕՆ

«Միջազգային Սոցիալիստական Բիւրոյի Կոչը»

Սեպտեմբեր ամսի 27ին «Դրօշակ»ի խմբագրութիւնը մի ընդարձակ գրութեամբ, դիմեց Բրիւսէլի Միջազգային Սոցիալիստական Բիւրոին յիշեցնելով անցեալ տարուայ Փարիզի միջազգային Սոցիալիստական Համաժողովի որոշումը՝ խնդրեց Բիւրոյին մի ընդհանուր կոչ անել եւրոպական պարլամենտների սոցիալիստ պատգամաւորներին՝ հարցապնդումներ անելու իրենց կառավարութիւններին հայկական հարցի մասին։ Իբրեւ պատասխան այդ դիմումի՝ հոկտ. 18ին մենք ստացանք, մեծ գոհունակութեամբ, հետեւեալ նամակը Սոցիալիստական Բիւրոյից. գրուած հոկտ. 16ից.

«ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Քաղաքացիներ, ԺԸՆԷՎ

Գործադիր Բիւրոն այսօր իսկ հրապարակում է մի կոչ(*) կազմակերպված պրոլետարիատին յօդուտ հայերի։ Նա խնդրում է եւրոպական պարլամենտների սոցիալիստ պատգամաւորներին յուզել հարցը։

Այս կոչի օրինակներից դուք կըստանաք։

«Հայկական հարց» բրօշիւրից, որպէսզի մենք հասցնենք մեր անդամներին։

Եղբայրական բարեւներով.
Վ. ՍԷՐՎԻ

ՆՈՐ ԴԻՄՈՒՄ

Հաստատ տեղեկութիւն ունինք որ Պարիզում երեք ականաւոր ֆրանսացիներից կազմակերպւում է մի պատգամաւորութիւն, որը պիտի տեսակցութիւն ունենայ ֆրանսիական մինիստրութեան նախագահ պ. Վալդէկ-Ռուսսոյի հետ հայկական հարցի վերաբերմամբ։

Շ. Ծ.

(*) Ծ. Խ. բանաւորներու սաղմուածքկոչը միւս անգամ պիտի հրատարակենք։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ.

Բարիզի նախկին դեսպան Միւնիր պէյ այցելած է Պոլսոյ Ֆրանսական դեսպանութեան կառավարչին եւ առաջարկած է իր ծառայութիւնները Լօրանտօի խնդիրը կարգադրելու համար։

Սակայն մերժում ստացեր է եւ իրեն առաջարկուեր է այլեւս չայցելել Ֆրանսական դեսպանատունը։

— Զինովիէվ Բ. դրան վերջնապէս յայտարարած է որ Թուրքիա միանգամայն յոյսը կարեր է Ռուսիոյ միջամտութենէն Լօրանտօի խնդիրը կարգադրելու համար։

— Մանաւանդ Ֆրանսական հիւպատոսի վրայ եղած յարձակմանը առթիւ Թուրքիա լիովին բաւարարութիւն տուած է Ֆրանսական կառավարութեանը։

— Պոլսոյ մէջ տեղեկութիւն ստացեր են որ Միսս Սթոն եւ իր ընկերուհին կատարելապէս առողջ են։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Հոկտեմբեր 15ին Պուլկարիոյ երեսփոխանական ժողովը բացուեցաւ։

— Դ. նախարարապետ Քարավէլօվ սպիտակ արծիւի շքանշանը ընդուներ է Զարէն։

ՉԻՆԱՍՏԱՆ

Լիհունկ-Զանկ ծանր հիւանդ է։

— Ռուսիա կուզէ որ իր զօրքերը երեք տարի եւս Մանչուրիոյ մէջ մնան։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Բարիզի պարսկական դեսպան Նազար աղան Թոնի մէջ պաշտօնապէս կը հերքէ Շահին դէմ եղած դաւադրութեան լուրը։

ԱՆԳԼԻԱ

Տէյլի Նիւս կը հաղորդէ որ նախարարներէն մէկ քանին տրամադիր են պօէրներու հետ կրկին բանակցութեան սկսելու պատերազմին վերջ տալու համար։

ԱՄԵՐԻԿԱ

Մակ—Քինլին սպանող Ցոլկոս ելեքտրական մեքենայով մահացումը արդէն կատարուեր է. ներկայ եղեր են միայն կառավարութենէն նշանակուած մարդիկ։

——

ՖՐԱՆՍԱ.

Նաւատորմիղ մը ճամբայ ելեր է դէպի Թրքական ջուրերը։

ՍԱՍ

Հ. Ս. Դ

Կը ծախուի 1896ին փետր. 2ին Իշխան Պօրիսի մկրտութեան առթիւ տպուած գործածուած նամակագրոշներ 1—5—15—25 սանդիմ։

Դիմել՝ ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏԵԱՆ
Վառնա

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—o—

Հայդելբերգում հիմնուել է մի գրադարան, որ նպատակ է դրել ծանօթացընել արտասահմանի հայ ուսանողութեան եւ ընդհանրապէս հետաքրքրուղ անձանց հայոց ներկայ կեանքին վերաբերեալ հայերէն եւ օտար լեզուով լոյս տեսած գրքերի հետ։ Գրադարանը ունի յիշեալ նպատակով հրատարակած գրքերի մի համեստ թիւ որի համար յայտնում ենք նուիրատու անձանց մեր խորին շնորհակալութիւնը եւ խնդրում ենք այն անձանց հատատութիւններին, որոնք կամենում են գրքերով եւ նուիրատուութիւններով օգնել գրադարանին, բարեհաճին ուղարկել հեռեւեալ հասցէով՝

A. Iohannessian Heidelbery Kaiser 31
№ 5

ԱԶԴ

—o—

Բաղէշի կուսակալութեան պատկանեալ Թուրդափ գիւղէն Պէկո Ասատուրեանի, հասատակաղմ շէկ պէխով ու յօնքերով, 6 ամսեկնի վեր ուր լինելն անյայտ է զայն եթէ ճանաչողներ կան յանուն մարդասիրութեան թող իր այրի տիկին մայրը մխիթարել հաճին, անոր ուր գտնուիլը խմբագրութեանս հաղորդելով։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

—o—

Ե. Կ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆԻ

(Նոր Ընկերցարան պատկերազարդ)

Առաջին տարի

(Երկրորդ տպագրութիւն բարեփոխուած)

Դին 70 Սնթ.

Կը ծախուի Վառնայ Մ. Գալբակճեանի քով։

Ա. Զ Դ

—o—

Սիլիսդրէի ազգային արական վարժարանի համար կուզուի վերկայեալ ուսուցիչ մը որ կարող ըլլայ աւանդելու՝ հայերէնէ ու ֆրանսերենէ զատ՝ նաեւ երկրորդական գիտելիքներ. փափաքողք բանակցութեան համար թող բարեհաճին դիմել տեղւոյն ազգային վարժարանին հոգաբարձութեան։

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով

Իւնիոն տէ Զէդիւտիան Ասոմ.
լէօրոք ռիւ տը լէֆօլ տը Շիմի 2

Սուրա ԺԸՆԷՎ
Կարգադիր Ցանձնաժողով

Отговорникъ:
Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность“ — Варна